Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1207-12.07.2011-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-103 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր ժա) կետով.

«ժա) սահմանում է կալանավորված անձանց եւ դատապարտյալների ՄԻԱՎ վարակի վերաբերյալ բուժաշխատողների կողմից նախաթեստային եւ հետթեստային խորհրդատվության եւ հետազոտության իրականացման կարգը:»

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի դ) կետում «ազատազրկման վայրերում գտնվողներին:» բառերը փոխարինել «կալանավորված անձանց եւ դատապարտյալներին:» բառերով,

2) 4-րդ մասի «հետազոտության կարգերը» բառերից հետո լրացնել «բացառությամբ 2-րդ մասի դ) կետի» բառերը:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»

ԱՌԱՐԿՈՒԹՅԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱԺ **պատգամավորներ** **Ա.Բաբլոյան, Մ.Մինասյան, Կ.Ավագյան** **01.11.2011**	1.1-ին հոդվածով առաջարկվող փոփոխվող օրենքի 4-րդ հոդվածի «նախա-և հետթեստային» բառերը փոխարինել «նախաթեստային և հետթեստային» բառերով: 2.3-րդ հոդվածով առաջարկվող փոփոխվող օրենքի 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը»:	1.Առաջարկն ընդունելի է :Ներկայացված տարբերակով նախագիծը խմբագրվել է Ազգային Ժողովում երկրորդ ընթերցում անցնելու համար ՀՀ վարչապետի սույն թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 02/10.4/16706-11 հանձնարականի համաձայն: 2.Առաջարկն ընդունվել է: Միաժամանակ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի «պաշտոնական հրապարակման» բառից հետո լրացվել է նաև «օրվան» բառը:

ՀՀ կառավարություն	1.Նկատի ունենալով, որ կալանավորված անձանց և Դատապարտյալների ՄԻԱՎ-ի վարակի վերաբերյալ հետազոտությունները ու խորհրդատվությունները համաձայն գործող օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի տրամադրվում են բուժաշխատողների կողմից, առաջարկվում է նախագծի հոդված 1-ով փոփոխվող ժա) կետը խմբագրել հետևյալ կերպ. Ժա) սահմանում է բուժաշխատողների կողմից կալանավորված անձանց և դատապարտյալների ՄԻԱՎ վարակի վերաբերյալ նախաթեստային և հետթեստային խորհրդատվության և հետազոտության իրականացման կարգը : 2.Օրենքի նախագծի 2-րդ հոդվածում, անհրաժեշտ է «վերջում» բառը փոխարինել «հետազոտության կարգերը» բառերից հետո» բառերով:	1.Առաջարկությունն ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: 2.Առաջարկությունն ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:
ԱԺ պատգամավոր **Ա.Բաբլոյան**	1.Լրացվող դրույթի միանշանակ ընկալման համար առաջարկվում է նախագծով փոփոխվող 4-րդ հոդվածի ժա) կետում «բուժաշխատողների կողմից» բառերը տեղափոխել «նախաթեստային» բառերից առաջ:	Առաջարկությունն ընդունվել է:

ՀՀ կառավարություն	2.Օրենքում կիրառվող տերմինների միասնականացման նպատակով առաջարկվում է փոփոխություն կատարել նաև օրենքի 11-րդ հոդվածի՝ 1)2-րդ մասի դ) կետում «ազատազրկման վայրերում գտնվողներին:» բառերը փոխարինելով «կալանավորված անձանց եւ դատապարտյալներին:» բառերով:	